

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶ

ՀՈՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմեց համայնքի ղեկավար Շ.Ամրգուլյանը *Մհամեյ*

Քննարկվել և հաստատվել է համայնքի  
ավագանու նիստում-----*8*----- արձանագր. թիվ -----*29*----- որոշմամբ



ՀՈՐՍ 2016թ.

## Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն  
  - 2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն
  - 2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը
  - 2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը
  - 2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները
  - 2.5. Չարգացման խոչընդոտներ և դժվարություններ
  - 2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՄ) վերլուծություն
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում  
  - 3.1. Համայնքի զարգացման տեսլական
  - 3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ
4. ՀԶԾ ֆինանսավորում
5. ՀԶԾ մոնիթորինգ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՅՈՒՆԻ ԽՈՍՔԸ

Վայոց Ձորի մարզի Հորս գյուղը վերաբնակեցվել է 1918 թվականին Նախիջևանի Մեծոպ գյուղից, ներգաղթած ընտանիքներով:

Գյուղի զարգացման հիմնական ուղղությունները գյուղատնտեսությունն է, անասնապահությունը և մեղվաբուծությունը: Քանի-որ գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1650-1700մ բարձրության վրա, ամռանը կլիման զով է, այստեղ ոչ բոլոր գյուղատնտեսական մթերքներն են արտադրվում: Գերակա ոլորտը մնում է անասնաբուծությունը և մեղվաբուծությունը:

Սակայն արտադրված գյուղ մթերքի իրացումը լուրջ խնդիր է գյուղացու համար կապված մարզկենտրոնից 20կմ հեռավորության, տրանսպորտային միջոցների բացակայության և շուկայի անհասանելի լինելու հետ:

Համայնքում դժվարությունները մեծ է նաև կապված խոտհնձի աշխատանքների հետ և աշխատանքների մեծ մասը կատարվում է ձեռքով:

Հաշվի առնելով համայնքում գյուղատնտեսական տեխնիկայի բացակայությունը (առկա գյուղատնտեսական տեխնիկան շատ հին է և մաշվածության տոկոսը բարձր), ծրագրում ենք միջոցներ հայթայթել նոր ու ժամանակակից գյուղատնտեսական տեխնիկա (տրակտոր, խոտհնձիչ, խոտ հավաքով, խոտի մամլիչ և այլն) ձեռք բերելու համար:

Նկատի ունենալով գյուղում առկա պատմա-մշակութային անգնահատելի կառույցները՝ 13-րդ դարի Չեսարի դարպասը, նպատակ ենք դրել մոտ ապագայում համայնքի համար գերակա ճյուղ ճանաչել զբոսաշրջությունը, մանավանդ, որ համայնքում իրականացվում է բնապահպանական ծրագիր, կապված էկոտուրիզմի հետ և նախատեսվում է գյուղում կազմակերպել տնային տուրիզմի և գիշերակայանների գործընթացը:

Ոլորտի զարգացմանը կնպաստի նաև համայնքում վերականգնելու հին ավանդույթները՝ կարպետագործություն, տեղում բրդի ու թելի մշակումը:

Կարևորագույն խնդիրներից է համայնքի սանիտարական վիճակը, պետք է բարելավվի աղբահանության հետ կապված խնդիրները:

Համայնքի համար շատ կարևոր է նաև գյուղի կոյուղագծի ցանցերի անցկացումը:

Համայնքի զարգացմանը կնպաստի նաև գազաֆիկացումը:

## 2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

### 2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Վայոց ձոր մարզի Հորս գյուղը վերաբնակեցվել է 1918 թվականին Նախիջևանի Մեծուպ գյուղից ներգաղթված ընտանիքներով: Գյուղն ավելի հին է քան ենթադրվում է, որի վկայությունն է 13-րդ դարի կիսավեր «Չեսարի Դարպաս» կառույցը և հարակից եկեղեցիական համալիրը: Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1650 մ բարձրության վրա: Մարզկենտրոն Եղեգնաձորից հեռավորությունը 20կմ է: Գյուղը սահմանակից է Շատին, Սալի և Թառաթունք համայնքներին: Գյուղից վերև Գնդասար լեռն է՝ 2935 մ բարձրությամբ: Գնդասար և հարակից լեռների սառնորակ խմելու ջրով ապահովված է գյուղի 85%-ը: Գյուղն ունի 94 ծուխ՝ 275 բնակչով, որից տղամարդիկ կազմում են բնակչության 48.3%-ը: Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

1. երեխաներ (0-6տ) ----- 6
2. դպրոցական (7-17տ) ----- 27
3. 18-62 տարեկան -----187
4. թոշակառու-----55
5. հաշմանդամ ----- 13
6. աշխատունակ-----210

Համայնքում կա 96 առանձնատուն 27.000քմ. տարածքով: Բնակարանով անապահով և կարիքավոր ընտանիքներ չկան: Կան բազմաթիվ կիսավթարային շենքեր, որոնք տնտեսական ճգնաժամի պատճառով չեն վերակորոգվում:

Բնակչությունը հիմնականում զբաղվում է մեղվապահությամբ, հողագործությամբ ու անասնապահությամբ: Կլիման՝ ձմռանը ցուրտ է, ամռանը՝ զով:

Համայնքի վարչական տարածքը -----	2790 հա, որից
• վարելահողեր -----	430 հա
• խոտհարք -----	240 հա
• արոտավայր -----	505 հա

- անօգտագործելի հողեր ----- 986,5 հա
- դաշտային ճանապարհներ ----- 3,0 հա
- տնամերձ հողեր ----- 40 հա
- դպրոց ----- 1 հա
- գյուղամիջյառ փողոցներ ----- 10 հա
- սեփականաշնորհված հողեր ----- 346 հա, որում  
մեկ հողաբաժնի չափը--- 2,6 հա, որից ա/ ջրովի՝ 0,30, բ/ անջրդի՝ 0,8, գ/  
խտհարք՝ 1,5հա

## 2.2. Համայնքի սոցիալտնտեսական իրավիճակը

Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն --- 7484.2հազ.դրամ

Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը (%)--- 43.3%

Համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները, հիմնական սպառման շուկաներ--- մեղր 20տ, պտուղ 80տ, բանջարաբոստանային կուլտ. --12տ, կաթ-20.000լ, միս-25տ:

Զբոսաշրջային հետաքրքրություններ կայացնող բնական, պատմական և մշակութային հուշարձաններ--- 13-րդ դարի կիսավեր «Ձեսարի Դարպաս» կառույցը և հարակից եկեղեցիական համալիրը:

Դպրոցական, նախադպրոցական և արտադրարձակ կրթական հաստատություններ, առողջապահական հաստատություններ--- Գյուղն ունի հիմնական դպրոց, գրադարան և բուժ կետ:

## 2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը

### ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՕՐԱԿԱՐԳԱՎՈՐԻՉ ՋՐԱՄԲԱՐԻ ԿԱՌՈՒՅՈՒՄ

Վերջին 6 տարիների ընթացքում վերանորոգվել են խմելու ջրագծերը, բայց անձրևաջրերը հաճախ ներթափանցում են խմելու ջրի ցանց, որը վտանգավոր է դարձնում ջրի օգտագործումը: Ջրերի մաքրության ու թաղերում ջրի հավասար բախշման համար անհրաժեշտություն է օրակարգավորիչ ջրամբարի կառուցումը:

## **ՈՌՈԳՄԱՆ ԶՐԱՄԲԱՐԻ ՄՆՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ**

Համայնքի ջրամբարը գտնվում է գյուղից 5կմ հեռավորության վրա, կառուցվել է 1985թ. 640.000լամ տարողությամբ, որը չի բավարարում նույնիսկ կարտոֆիլի ու բանջարաբուստանային մյուս կուլտուրաների հողատարածքների ոռոգմանը: Որովհետև ջրամբարը չունենալով արտաքին ցանց սնուցվում է ձնհալի ու անձրևի ջրերով: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ապրիլ-մայիս ամիսներին անձրևներից ու ձնհալից գոյացած ջրերը անտեղի կորչում են ձորերում: Արդյունքում շատ տարածքներ՝ շուրջ 80%-ը, մնում է անջրդի, որոնք օգտագործվում են որպես արոտավայրեր ու խոտհարքներ: Բայց ջրամբարի սնուցման արտաքին ցանցի կառուցումից հետո շուրջ 200հա հողատարածք հնարավոր կլինի դարձնել ջրովի, իսկ 70հա հողատարածքի վրա հնարավոր կլինի հիմնելու պտղատու այգիներ՝ ստեղծելով նոր աշխատատեղեր ու ապահովելով բարձր և որակյալ բերք: Գյուղից ներքև գտնվող 30հա հողատարածքները արդյունավետ և նպատակային օգտագործելու համար անհրաժեշտ է ոռոգման հողային առուների վրա տեղադրել 2,0կմ կիսախողովակներվերոնշյալ 30,0հա հողատարածքներում նոր այգիներ հիմնելու և ոռոգման աշխատանքները լիարժեք կազմակերպելու համար: Ընդառաջելով բնակչության դիմումներին ու խնդրանքին ծրագիրը ընդունում ենք համայնքի համար առաջնային և հիմնախնդիրը բարձրացնում ենք ՀՀ կառավարության առջև՝ ծրագիրը ֆինանսավորելու համար:

## **ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼ ՀԱՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԵՏ**

Համայնքների զարգացման համար կարևոր նշանակություն ունի զազաֆիկացումը, որի իրականացման համար անհրաժեշտ է համագործակցել հարևան համայնքների հետ, հարցը բարձրացնել համապատասխան կառույցների առջև, որ տարածքում մուտք գործի զազամուղ:

## **ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

Բարձրադիր գոտու արոտավայրերում համայնքի բնակիչներին պատկանող խոշոր եղջերավոր անասունների ամառային արոտը, զիշերային հանգիստն ապահովելու, զիշատիչ զազաններից անվնաս դարձնելու համար անհրաժեշտ է 2 կիսակառույց զիշերակաց, որի

իրականացմամբ հետաքրքրված է համայնքային զարգացման Եվրոմիության երևանյան գրասենյակը: *Կազմակերպությունը հետաքրքրված է նաև համայնքում կաթի ընդունման կետ հիմնելու խնդրով:* Համայնքի բնակիչների հիմնական զբաղմունքի ու եկամտի աղբյուրը անասնապահությունն է: Համայնքում օրեկան արտադրվում է մոտ 1500լ կաթ: Համայնքը տարածաշրջանի կաթի մթերման կետից հեռու 20-25կմ հեռավորության վրա, և համապատասխան տեխնիկական միջոցների բացակայության պատճառով արտադրված կաթը չեն կարողանում տեղափոխել, ստիպված կաթն ամբողջությամբ մշակում են տնային պայմաններում, սակայն համապատասխան շուկայի բացակայության ու նաև հնարավորությունների պատճառով մշակված գյուղմթերքը ևս չի իրացվում: Ընդառաջելով բնակչության նամակներին անհրաժեշտ համարվեց գյուղում ունենալ կաթի ընդունման կետ:

## **2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները**

Համայնքի բյուջեի եկամուտները գոյանում են համայնքի բյուջե վճարվող հարկերից, գույքահարկից, տեղական տուրքերից, վարչական տարածքի գույքի վարձակալության վարձավճարներից և ֆինանսական համահարթեցման նպատակով տրվող դոտացիաներից: Համայնքի բյուջեի եկամուտների սեփական եկամուտները փոքր մաս են կազմում. 2016 թ., ընդհանուր տարեկան բյուջեն կազմում էր 7.484հազ.դրամ, ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը 43.3% է:

2017-ի բյուջեի նախագծով նախատեսվել է 6,892 մլն դրամ: Ֆինանսական միջոցների սղության պատճառով համայնքապետարանը միայն մեկ ծրագիր է կարողանում իրականացնել՝ ներհամայնքային փողոցների լուսավորության անցկացումը, որը կարևոր և կենսական նշանակություն ունի գյուղի համար: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է մոտ 3,0մլն ՀՀ դրամ գումար: Ավագանու որոշմամբ այն կիրականացվի համայնքային բյուջեի միջոցներով, նախատեսվում է ավարտել մինչև 2017թ. սեպտեմբեր ամիսը: Մյուս ծրագրերի ֆինանսական միջոցները կանխատեսվում է ՀՀ կառավարությունից ու միջազգային դոնոր կազմակերպություններից:

Առաջիկա տարիներին ակնկալվում է պետության կողմից տրամադրվող ֆինանսական համահարթեցման նպատակով տրվող դոտացիաների չափի ավելացում, ինչպես նաև նախատեսվում է ավելացնել համայնքի բյուջե մտնող սեփական եկամուտների չափաբաժինը, ի հաշիվ տեղական տուրքերի, հարկերի և այլ վճարների: Առաջիկա տարիներին նախատեսված համայնքային ծրագրերի իրականացման գործում նախատեսվում է ներգրավել պետական և դոնոր կազմակերպությունների աջակցությունը:

## 2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Համայնքի զարգացման համար կան մի շարք խոչընդոտներ ու մեծ դժվարություններ: Դրանցից կարելի է առանձնացնել աշխատատեղերի բացակայությունը, չկա նաև որևէ հնարավորություն ձեռնարկատիրական գործունեություն սկսելու համար: Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանվել է դեռևս 1997թ ՇՀ կաավարության թիվ 51 որոշմամբ հետևյալ կազմով.

- մշակույթի տուն ----- 1 միավոր
- ռոռզման ցանց ----- 30կմ
- ջրմուղի ցանց ----- 18կմ
- ներհամայնքային փողոց և ճանապ. ---- 2,5կմ
- դաշտամիջյան ճան. ----- 40կմ
- կամուրջներ----- 4հատ
- գերեզմանատուն ----- 2,0հա

Տնտեսական անկման հետևանքով, համայնքի գույքի ֆիզիկական վիճակը վատթարացել է: Պահեստամասեր և քսայուղեր չլինելու պատճառով անմխիթար վիճակում են գյուղ. տեխնիկան ու գործիքները: Անձրևաջրերը հաճախ ներթափանցում են խմելու ջրի ցանց, որը վտանգավոր է դարձնում ջրի օգտագործումը: Ռոռզման ցանցը գտնվում է անմխիթար վիճակում, անհրաժեշտ է կատարել կապիտալ վերանորոգում: Ներկայումս անհրաժեշտ է վերանորոգել 2,5կմ ներհամայնքային ճանապարհ և փողոցներ; Նախադպրոցական կրթություն չի իրականացվում մանկապարտեզ ու համապատասխան տարիքի երեխա չունենալու պատճառով: Խնդիր է ակտիվ մշակութային և մարզական կյանքի



կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ, մշակույթի տունն ունի հիմնանորոգման ու լոկալ ջեռուցման և համապատասխան գույքի կարիք: Համայնքի զարգացման խոչընդոտներից է համայնքի աղբահանության հարցը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը: Խոսք չի կարող լինել համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպման մասին, թեկուզ արդեն գյուղ հասնող ճանապարհը պետքույզեի աջակցությամբ բարվոք վիճակում է: Ոռոգման ջրամբարի սնուցման արտաքին ցանցի կառուցումը խթան կհանդիսանա համայնքում գյուղատնտեսության զարգացման համար: Հորսը զբոսաշրջային հեռանկարներ ունեցող համայնքներից է՝ հենց 13-րդ դարի «Չեսարի Դարպաս» կառույցի և հարակից եկեղեցիական համալիրի առկայությունը կխթանեն զբոսաշրջության զարգացմանը: Գյուղի սոցիալ տնտեսական պայմանները խոչընդոտում են թերևս ամենակարևոր՝ ծնելիության և բազմազավակության խթանմանը, ու նաև օր-օրի ավելանում է արտագաղթը:

## **2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն**

### **ՈՒԹԵՂ ԿՈՂՄԵՐԸ**

- Համայնքն ունի բարձրագույն ուսունական հաստատություններն ավարտած 12 շրջանավարտ, որոնց մասնագիտությունները թույլ են տալիս աշխատանք իրականացնել կրթական, մշակութային ու շինարարական բնագավառներում:
- Գյուղում կան 13-րդ դարի պատմամշակութային եզակի արժեքներ, որոնք հետագայում հնարավորություն կստեղծեն գյուղում զարգացնելու զբոսաշրջությունը:

- Երևանի մայրուղուց ու Մելիք տանող ավտոճանապարհից մինչև գյուղ հասնող ճանապարհը գտնվում է բարվոք վիճակում:

### ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Ծնելիության նվազումը՝ կապված սոցիալական-տնտեսական վիճակի վատթարացման հետ:
- Գործազրկությունը:
- Մեծանում է արտագնա աշխատանքի մեկնողների թիվը:
- Համայնքի ոռոգման ջրերի ցանցերի անմխիթար վիճակը:
- Հողերի անջրդիության պատճառով գյուղացու եկամուտը նվազում է:

### ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Երիտասարդ աշխատուժի առկայությունը:
- Մեծ քանակությամբ ջրի ամբարման հնարավորությունը /եթե կառուցվի ջրամբարի սնուցման համար արտաքին ցանց:

### ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ

- Համայնքի անդամների անվճարունակության պատճառով հարկերի և վարձավճարների գանձման դժվարությունները մեծ վտանգ են սպառնում համայնքի բյուջեի կատարմանը:
- Ջրամբարի արտաքին ցանցի կառուցման

աշխատանքների ուշացման պատճառով անհնար  
կլինի գյուղում զարգացնել գյուղատնտեսությունը:

### **3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում**

#### **3.1. Համայնքի զարգացման տեսլական**

Համայնքի տեսլականն է ունենալ զարգացած զբոսաշրջությամբ, գյուղատնտեսությամբ, փոքր բիզնեսներով համայնք, որտեղ բնակիչները կունենան զբաղավածություն, երիտասարդները կվերադառնան և կմնան համայնքում: Դրան է ուղղված համայնքի կողմից կազմված առաջնահերթ ծրագրերի, նպատակների ձևակերպումը ըստ առաջնահերթ բնագավառների: Առաջնահերթություն ենք համարում ներհամայնքային փողոցների լուսավորության հարցը: Գիշերները գյուղն ընկղմվում է մթության մեջ և շրջապատը դառնում է անանցանելի: Ընդառաջելով բնակչության դիմումներին, ներհամայնքային փողոցների լուսավորության անցկացումով գյուղամիջյան բոլոր՝ 4 թաղամասերում՝ 2,5կմ ընդհանուր տարածքով գիշերային ժամերին կլուսավորվի, որը առաջիկա տարիներին ապահովություն կներշնչի գյուղացուն, եթե այսօր մտավախություն կա մոտակա լեռներից գիշատիչ գազանների մուտքը գյուղ, ապա առաջիկա տարիների համար նման մտավախություն չի լինի:

*Համայնքի զարգացման հիմնական ուղղություններից և զարգացման խթաններից է օրակարգավորիչ ջրամբարի կառուցումը, որի արդյունքում կերաշխավորվի խմելու ջրի մաքրությունն ու թաղերում խմելու ջրի հավասար բախշումը: Գյուղի համար զարգացում են երաշխավորում նաև ոռոգման ջրամբարի սնուցման արտաքին ցանցի կառուցումը, որից հետո շուրջ 200հա հողատարածք կդառնա ջրովի և կհիմնվեն նոր պտղատու այգիներ, մշակույթի տան հիմնանորոգումն ու դրա համապատասխան գույքով ապահովումը, որը կաշխուժացնի համայնքի մշակութային ու մարզական կյանքը: Համայնքի զարգացմանը խթան կհանդիսանա նաև անասունների գիշերային հանգիստն ապահովելու, գիշատիչ*

կենդանիներից անվնաս դարձնելու համար գիշերակաց կիսակառույցների կառուցումն ու գյուղում կաթի ընդունման կետ ունենալը, որոնք նաև խթան կհանդիսանան գյուղում աղքատության նվազմանը: :

### **3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ**

#### **ԾՐԱԳԻՐ 1**

##### **ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄ**

###### **ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԻՐՆԵՐԸ**

Կարևոր և կենսական նշանակություն ունի ներհամայնքային փողոցների լուսավորության անցկացումը: Գիշերային ժամերին գյուղն ընկղմվում է մթության մեջ և շրջապատը դառնում է անանցանելի: Ընդառաջելով բնակչության դիմումներին, այս ծրագրով առաջարկվում է լուսավորություն անցկացնել գյուղամիջյան բոլոր՝ 4 թաղամասերում՝ 2,5կմ ընդհանուր տարածքով: Ծրագրի իրականացման արդյունքում գիշերային ժամերին գյուղը կլուսավորվի:

**Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ**

- Կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվարկային փաստաթղթերը,
- Կնքել պայմանագիր <<Հայէլեկտրոցանցեր>> ՓԲԸ-ի հետ,
- Ձեռքբերել ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներ,

###### **ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է 3,0 մլն ՀՀ դրամ գումար:

Ավագանու որոշմամբ այն կիրականացվի համայնքային բյուջեի միջոցներով, նախատեսվում է ավարտել մինչև 2017թ. սեպտեմբեր ամիսը:

## ԾՐԱԳԻՐ 2

### **ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՕՐԱԿԱՐԳԱՎՈՐԻՉ ՋՐԱՄԲԱՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ**

Վերջին 6 տարիների ընթացքում մասնակի վերանորոգվել է խմելու ջրագծերը, բայց անձրևաջրերը հաճախ ներթափանցում են խմելու ջրի ցանց, որը վտանգավոր է դարձնում ջրի օգտագործումը: Ջրերի մաքրության ու թաղերում ջրի հավասար բախշման համար անհրաժեշտություն է օրակարգավորիչ ջրամբարի կառուցումը:

#### **ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

Ծրագրի անհրաժեշտությունը մեծ է և մարզպետարանի քաղաքաշինության մասնագետների կողմից մշակվել ու նախագծվել է այն, ըստ որի ծրագրի իրականացման համար անհրաժեշտ կլինի 35մլն ՀՀ դրամ: Նախատեսվում է ծրագիրն իրականացնել ՀՀ պետ բյուջեի ֆինանսական աջակցությամբ: Ավագանու որոշմամբ 5%-ը ներդրում կարվի համայնքապետարանի կողմից:

## ԾՐԱԳԻՐ 3

### **ՈՌՈԳՄԱՆ ՋՐԱՄԲԱՐԻ ՄՆՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ**

#### **ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՐԴԻՐՆԵՐԸ**

Համայնքի ջրամբարը գտնվում է գյուղից 5կմ հեռավորության վրա, կառուցվել է 1985թ. 640.000լամ տարողությամբ, որը չի բավարարում նույնիսկ կարտոֆիլի ու բանջարաբուստանային մյուս կուլտուրաների հողատարածքների ոռոգմանը: Որովհետև ջրամբարը

չունենալով արտաքին ցանց սնուցվում է ձնհալի ու անձրևի ջրերով: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ապրիլ-մայիս ամիսներին անձրևներից ու ձնհալից գոյացած ջրերը անտեղի կորչում են ձորերում: Արդյունքում շատ տարածքներ՝ շուրջ 80%-ը, մնում է անջրդի, որոնք օգտագործվում են որպես արոտավայրեր ու խոտհարքներ: Բայց ջրամբարի սնուցման արտաքին ցանցի կառուցումից հետո շուրջ 200հա հողատարածք հնարավոր կլինի դարձնել ջրովի, իսկ 70հա հողատարածքի վրա հնարավոր կլինի հիմնելու պտղատու այգիներ՝ ստեղծելով նոր աշխատատեղեր ու ապահովելով բարձր և որակյալ բերք: Գյուղից ներքև գտնվող 30հա հողատարածքները արդյունավետ և նպատակային օգտագործելու համար անհրաժեշտ է ոռոգման հողային առուների վրա տեղադրել 2,0կմ կիսախողովակներվերոնշյալ 30,0հա հողատարածքներում նոր այգիներ հիմնելու և ոռոգման աշխատանքները լիարժեք կազմակերպելու համար: Ընդառաջելով բնակչության դիմումներին ու խնդրանքին ծրագիրը ընդունում ենք համայնքի համար առաջնային և հիմնախնդիրը բարձրացնում ենք ՀՀ կառավարության առջև՝ ծրագիրը ֆինանսավորելու համար:

**Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ**

- հիմնախնդիրը բարձրացնել ՀՀ կառավարության առջև՝ ծրագիրը ֆինանսավորելու համար
- կազմել ծրագրի նախագծա-նախահաշվային փաստաթղթերը

#### **ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

Նախնական մոտավոր հաշվարկներով նշված աշխատանքների արժեքը կկազմի մոտ 120մլն դրամ: Համայնքի կողմից ներդրում կարվի աշխատուժի տեսքով:

#### **ԾՐԱԳԻՐ 4**

#### **ՄՇԱԿՈՒՅԹԻ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈՂՄԱՆ**

## ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՎԱՐՏՈՒՄ

### ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Համայնքի մշակույթի շենքը, որտեղ տեղավորված են նաև գրադարանը, բուժ կետն ու վարչական համակարգը, ունի շուրջ 40 տարվա վաղեմություն: Վերջին տարիներին այն մասնակի վերանորոգվել է, սակայն շենքային ոչ բարվոք պայմանների ու համապատասխան գույքի բացակայության պատճառով այն չի ծառայում իր նպատակին: Ծրագրվում է շենքի վերանորոգման աշխատանքները ավարտել ու կատարել ներքին հարդարման աշխատանքներ: Առաջնային խնդիրներից է նաև համապատասխան գույքի ձեռք բերումը:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

- հիմնախնդիրը բարձրացնել ՀՀ կառավարության առջև՝ ծրագիրը ֆինանսավորելու համար
- կազմել ծրագրի նախագծա-նախահաշվային փաստաթղթերը

### ԾՐԱԳՐԻՑ ՄՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- աշխուժացնել համայնքի մշակութային կյանքը
- տոնական օրերին կազմակերպել մասսայական միջոցառումներ ու երեկոներ
- համայնքի անդամներին տրամադրել խաղասենյակներ շախմատի, նարդու և այլ խաղերի համար

### ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Նախնական մոտավոր հաշվարկներով նշված աշխատանքների արժեքը կկազմի մոտ 35 մլն դրամ, համայնքի կողմից ներդրում կարվի աշխատուժի տեսքով:

## ԾՐԱԳԻՐ 5

### ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԻ

# ՎԵՐԱՆՈՐՈՎՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՎԱՐՏՈՒՄ

## ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԻՐՆԵՐԸ

Համայնքի հիմնական դպրոցի շենքի մասնակի վերանորոգման աշխատանքներն սկսվել են դեռևս 2014թ-ից, նորոգվել է տանիքը և բարեկարգվել է խմելու ջրագիծը, դպրոցի բակում կառուցվել է ցայտաղբյուր, որն ապահովում է շուրջօրյա խմելու ջուրը: Շենքն ունի ներքին հիմնանորոգման կարիք: Նկատի ունենալով համայնքում երիտասարդ ընտանիքների դինամիկ աճը առաջիկա տարիներին կաճեն նաև դպրոցահասակ երեխաների թվաքանակը, և բնականաբար անհրաժեշտություն կլինի համայնքային դպրոցի բարվոք վիճակը: Աշխատանքները կիրականացվեն համայնքի ղեկավարի ու դպրոցի տնօրենի պատասխանատվությամբ:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

- հիմնախնդիրը բարձրացնել ՀՀ կառավարության առջև՝ ծրագիրը ֆինանսավորելու համար
- կազմել ծրագրի նախագծա-նախահաշվային փաստաթղթերը
- կազմակերպել բարերարների կամ համայնքի կողմից ներդրումների խնդիրը

## ԾՐԱԳԻՐ 6

### ԱՄԱՌԱՅԻՆ ԱՐՈՏՈՒՄ ԽՈՇՈՐ ԵՂՋԵՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ՀԱՆԳՍՏԻ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

#### ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԻՐՆԵՐԸ

Բարձրադիր գոտու արոտավայրերում համայնքի բնակիչներին պատկանող խոշոր եղջերավոր անասունների ամառային արոտը, գիշերային հանգիստն ապահովելու, գիշատիչ



զագաններից անվնաս դարձնելու համար անհրաժեշտ է 2 կիսակառույց գիշերակաց:

**Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ**

- կազմել ծրագրի նախագծա-նախահաշվային փաստաթղթերը
- հիմնախնդիրը բարձրացնել միջազգային դոնոր կազմակերպության առջև՝ ծրագիրը ֆինանսավորելու համար
- կազմակերպել համայնքի կողմից ներդրումների խնդիրը

## **ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

Ծրագրի իրականացմամբ հետաքրքրված է համայնքային զարգացման Եվրոմիության երևանյան գրասենյակը: Նախնական պայմանավորվածության համաձայն համաֆինանսավորող դոնոր կազմակերպության ընտրության դեպքում կհաշվարկվեն ծախսվելիք ֆինանսական միջոցներն ու կսկսվեն աշխատանքները: Համայնքի կողմից ներդրում կարվի աշխատուժի տեսքով:

## **ԾՐԱԳԻՐ 7**

### **ԿԱԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԵՏԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ**

#### **ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Համայնքային զարգացման Եվրոմիության երևանյան գրասենյակը *հետաքրքրված է նաև համայնքում կաթի ընդունման կետ հիմնելու խնդրով*: Համայնքի բնակիչների հիմնական զբաղմունքի ու եկամտի աղբյուրը անասնապահությունն է: Համայնքում օրեկան արտադրվում է մոտ 1500լ կաթ: Համայնքը տարածաշրջանի կաթի մթերման կետից հեռու 20-25կմ հեռավորության վրա, և համապատասխան տեխնիկական միջոցների բացակայության պատճառով արտադրված կաթը չեն կարողանում տեղափոխել, ստիպված կաթն ամբողջությամբ մշակում են տնային պայմաններում, սակայն համապատասխան շուկայի բացակայության ու նաև հնարավորությունների պատճառով մշակված գյուղմթերքը ևս չի իրացվում: Ընդառաջելով բնակչության նամակներին անհրաժեշտ համարվեց գյուղում

ունենալ կաթի ընդունման կետ:

**Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ**

- հիմնախնդիրը բարձրացնել միջազգային դոնոր կազմակերպությունների առջև ծրագիրը ֆինանսավորելու համար
- կազմել ծրագրի նախագծա-նախահաշվային փաստաթղթերը
- կազմակերպել բարերարների կամ համայնքի կողմից ներդրումների խնդիրը

## **ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

Ծրագրի իրականացմամբ հետաքրքրված է համայնքային զարգացման Եվրոմիության երևանյան գրասենյակը: Նախնական պայմանավորվածության համաձայն համաֆինանսավորող դոնոր կազմակերպության ընտրության դեպքում կհաշվարկվեն ծախսվելիք ֆինանսական միջոցներն ու կսկսվեն աշխատանքները: Համայնքի կողմից ներդրում կարվի աշխատուժի տեսքով:

## **ԾՐԱԳԻՐ 8**

### **ԳՅՈՒՂՏԵՆՆԻԿԱՅԻ ՁԵՆՔԲԵՐՈՒՄ**

#### **ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Համայնքի անդամները հիմնականում զբաղվում են անասնապահությամբ: Խոտհարքների հեռավորությունը մեծ դժվարություն է առաջացնում գյուղացու համար: Ընդառաջելով բնակչության նամակներին անհրաժեշտ համարվեց համայնքում ունենալ համապատասխան գյուղտեխնիկա, որը կթեթնացնի գյուղացու հոգսը:

**Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ**

- նախ հիմնել կոոպերատիվ ընկերություն
- տրակտոր, խոտհնձիչ ու խոտամալիչ, և խոտ հավաքող գյուղտեխնիկա ձեռք

բերելու համար կազմել ծրագրի նախագծա-նախահաշվային փաստաթղթերը

- հիմնախնդիրը բարձրացնել միջազգային դոնոր կազմակերպությունների առջև՝ ծրագիրը ֆինանսավորելու համար

#### ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Դոնոր կազմակերպության ընտրության դեպքում կհաշվարկվեն գյուղտեխնիկա ձեռք բերելու համար ծախսվելիք ֆինանսական միջոցները ու գույքի գնման համապատասխան օրենքի շրջանակում ձեռք կբերվի անհրաժեշտ գյուղտեխնիկան:

### 4. ՀԶԾ ֆինանսավորում

Համայնքի զարգացման ծրագրում նախատեսված ծրագրերը և այլ աշխատանքներ ուղղված համայնքի զարգացմանը կիրականացվեն օգտագործելով համայնքի սեփական եկամուտները, ՀՀ Կառավարության պետական աջակցությունը, միջազգային և դոնոր կազմակերպությունների, ինչպես նաև անհատ ներդրողների աջակցությամբ: Նշված ներդրումները և աջակցությունը ստանալու համար այժմ տարվում են աշխատանքներ: Մասնավորապես ՀԶԾ-ում նշված մի քանի ծրագրերը նախատեսվում է իրականացնել ՀՀ Կառավարության և միջազգային կազմակերպության աջակցությամբ: Ծրագրերի մի մասը կիրականացվեն համայնքի սեփական եկամուտների հաշվին:

Վերոնշյալ ծրագրերի բյուջեները հաշվարկված են նախնական գնահատմամբ, նախատեսվում է այդ ծրագրերը իրականացնել համայնքի սեփական եկամուտների, ՀՀ Պետական ու միջազգային և դոնոր կազմակերպությունների աջակցությամբ:

### 5. ՀԶԾ մոնիթորինգ

Համայնքի ՀԶԾ ծրագրով ներկայացված զարգացման ծրագրերի իրականացումը կարևոր է համայնքի զարգացման գործում, դրանք խթան կհանդիսանան զվխավորապես համայնքի բնակչության կենսամակարդակի և ապրուստի

պայմանների բարելավմանը: Նշվածի գնահատման աստիճանը որոշելու համար շատ կարևոր է ՀԶԾ-ի մոնիթորինգը: Մոնիթորինգի կենթարկվեն իրականացման փուլում գտնվող ծրագրերը: Դա կառավարչական գործիք է, որը հնարավորություն է տալիս հսկել ծրագրերի կատարման ընթացքը և անհրաժեշտության դեպքում փոփոխություններ նախաձեռնել: Մոնիթորինգն իրականացվում է համապատասխան կատարողականի ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ հավաքագրելու և ցուցանիշների փաստացի արժեքները թիրախային արժեքների հետ համեմատելու միջոցով: Համեմատության միջոցով հնարավոր է լինում չափել ծրագրի առաջընթացը, հաջողության աստիճանը, ծրագրով պայմանավորված փոփոխությունները կամ գնահատել ծրագիրն իրականացնողի կատարողականը: Մոնիթորինգն, առաջին հերթին, անհրաժեշտ է համայնքի ղեկավարությանը, որպեսզի հնարավոր լինի հսկողություն սահմանել Ծրագրի իրականացմանն ուղղված աշխատանքների վրա:

ՀԶԾ մոնիթորինգի համար անհրաժեշտ է նախապես մշակել մոնիթորինգի պլան, որը սահմանում է մոնիթորինգային ցուցանիշների հավաքագրման հաճախականությունը, աղբյուրն ու մեթոդը: Մոնիթորինգային ցուցանիշների մասին տեղեկություններ պետք է հավաքագրվեն կիսամյակային կամ տարեկան կտրվածքով: Մոնիթորինգի հաշվետվությունը համայնքի ավագանուն պետք է ներկայացվի ամեն տարի, հաշվետու տարվան հաջորդող տարվա առաջին եռամսյակում: Հաշվետվության մեկ օրինակ, միայն հեռահար և անմիջական նպատակների մասով, ուղարկվում է ՀՀ ՏԿՁՆ տեղական ինքնակառավարման վարչություն:

Նախատեսվում է այն իրականացնել նշված բոլոր ծրագրերի իրականացման ժամանակ, ինչպես նաև իրականացնել մոնիթորինգ յուրաքանչյուր ծրագրի ավարտից հետո: Հիմնականում մոնիթորինգի կենթարկվեն հետևյալ ցուցանիշները.

- յուրաքանչյուր ծրագրի բյուջեն, դրա ֆինանսավորման աղբյուրները,
- ծրագրի օգուտները և արդյունքները,
- ներգրավված բնակիչների թիվը,

Դա նաև ՀԶԾ իրականացման գնահատում է, որը նաև ծրագրի իրականացման ու արդյունքների օբյեկտիվ ուսումնասիրություն է: Ծրագրերի արդյունավետության ու

ծախսարդյունավետության գնահատման միջոցով փորձ է արվում պատասխանել երեք հիմնական հարցի՝

- Ինչպե՞ս է ծրագիրն իրականացվել կամ իրականացվում,
- Ի՞նչ ազդեցություն է այն ապահովել,
- Արդյո՞ք ստացված արդյունքներն արդարացնում են այն ծախսերը, որոնք իրականացվել են արդյունքներն ապահովելու համար:

*Ծրագրերի իրականացման ընթացքում կատարված մոնիթորինգի փվյալների ամփոփման ժամանակ տեղեկատվություն կտրամադրվի ՀԶԾ մոնիթորինգի անձնագրով: Ի դեպ մոնիթորինգի անձնագիրը կկազմվի ըստ առանձին ծրագրերի:*